ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ

Մայիսի 3-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եւրոպայի 19 երկրներից ժամանած երիտասարդ քաղաքական գործիչների հավաքի մասնակիցներին:

Նորին Սրբությունը քաղաքական գործիչներին ներկայացրեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հիմնադրման պատմությունը, Հայ Եկեղեցու կարեւոր առաքելությունը հայ ժողովրդի կյանքում: Անդրադարձ կատարվեց ներկայիս փոփոխվող աշխարհի մարտահրավերներին եւ դրանց դիմագրավման գործում Եկեղեցու գործունեությանը:

Եւրոպայի երիտասարդ քաղաքական գործիչների բազմաթիվ հարցումներին ի պատասխան՝ Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Հայ Եկեղեցու միջեկեղեցական ու միջկրոնական հարաբերություններին եւ դրանց կարեւորությանը, ներկայիս քաղաքական գործընթացներին եւ աշխարհը հուզող տնտեսական ճգնաժամին եւ վերջինիս հաղթահարման գործում Եկեղեցու դերակատարությանը:

«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆ՝ ԿԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Մայիսի 3-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պատվո բարձրագույն շքանշան հանձնեց տիկին Կարինե Սարգսյանին՝ գնահատելով ազգային կյանքում նրա ստվարաճաճ ընթացքը եւ գործունեությունը: Տիկին Կարինե Սարգսյանի եւ լոնդոնաբնակ բարերար Արմեն Սարգսյանի հովանավորությամբ 2008թ. Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի հարեւանությամբ կառուցվել էր Սուրբ Վարդան եւ Սուրբ Հովհաննես Մկրտիչ մատուռ-մկրտարանը:

Հանդիսավոր արարողությունը բացվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի խոսքով: Այնուհետեւ տիար Արմեն Սարգսյանը ներկայացրեց տիկին Կարինե Սարգսյանին՝ ուրախություն հայտնելով, որ Հայ Եկեղեցին եւ Վեհափառ Հայրապետը գնահատանքի են արժանացնում տիկին Կարինեի անձը եւ գործունեությունը:

Ապա «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո ներս բերվեց Հայրապետական Սրբատառ Կոնդակը,որն ընթերցեց Արշակ Սրբազանը:

Կոնդակի ընթերցումից հետո Նորին Սրբությունը տիկին Սարգսյանին հանձնեց Հայ Առաքելական Եկեղեցու բարձրագույն՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պատվո շքանշանը: Ապա տիկին

Կարինե Սարգսյանը շնորհակալական խոսքով դիմեց Վեհափառ Հայրապետին՝ հույս հայտնելով, որ նորակառույց մատուռ-մկրտարանը պիտի ծառայի հայ ժողովրդի հոգեւոր կարիքներին, եւ հազարավոր մանուկներ պիտի մկրտվեն այնտեղ՝ իբրեւ հավատավոր զավակներ մեր Եկեղեցու եւ ժողովրդի:

Նա վստահեցրեց, որ շարունակելու է իր ծառայությունը բերել ի փառս Աստծո եւ Հայ Եկեղեցու:

Արարողությունը փակվեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնության խոսքով: Նորին Սրբությունը վերստին իր գնահատանքը հայտնեց մեծարյալին աստվածահաճո ընթացքի համար, որով իր մասնագիտական կարողությունները եւ բարի վաստակը ծառայեցնում է ազգի բարօրությանը, Եկեղեցու շինությանն ու պայծառությանը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց նվիրյալ հայուհուն նույն եկեղեցասիրությամբ եւ էջմիածնասիրությամբ, քաջեռանդ ոգով շարունակել իր հավատքը վկայել ազնիվ կյանքով եւ բարի ու առաքինազարդ գործերով:

«ՍՈՒՐԲ ՋԱՏԻԿԸ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ» ԽՈՐԱԳՐՈՎ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մայիսի 5-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում բարձր նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղի ունեցավ միջմանկապարտեզային տոնական ցերեկույթների եւ մրցույթ-ցուցահանդեսների եզրափակիչ հանդիսություն՝ նվիրված Հիսուս Քրիստոսի հրաշափառ հարությանը:

Վեհափառ Հայրապետի օրհնությամբ, թեմական առաջնորդների եւ տեղական ինքնակառավարման մարմինների աջակցությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը Սուրբ Ջատկին նվիրված միջոցառումներ էր կազմակերպել «Սուրբ Ջատիկը մանուկների աչքերով» խորագրով Հայաստանի 105 նախադպրոցական հաստատություններում:

Հանդիսությունն սկսվեց Տերունական աղոթքով, որից հետո ներկաներին ողջունեց Մայր Աթոռի ՔԴԿ տնօրեն Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը: Հայր Սուրբն ուրախությամբ նշեց, որ ծրագիրն իր բարի պտուղներն է տալիս այսօր, երբ հայ մանկան թոթովախոս շուրթերից հնչում է աղոթք, երգ եւ ասմունք՝ եւս մեկ անգամ ամենքիս պարուրելով Քրիստոսի հարության հույսով: Հայր Վարդանն իր ողջույնի խոսքում շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանն օրհնության, քաջալերության համար եւ կարեւորեց մատաղ սերնդի քրիստոնեական դաստիարակության անհրաժեշտությունը:

Էջմիածնի երեք՝ թիվ 6, 11 եւ 15 մանկապարտեզների սաները մանկական տոնական ցերեկույթի ժամանակ ներկայացրեցին Մեծ պահքի կիրակիների խորհուրդը՝ ընգծելով Ս. Հարության տոնի կարեւորությունը: Նրանք նաեւ կատարեցին տոնին նվիրված շարականներ, ասմունքեցին եւ պարեցին:

Միջոցառման վերջում ներկաներին իր Հայրական օրհնությունը տվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց Քրիստոնեական

Շարադրության գրքերում դասերն ամփոփումներ